ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

2 հունիսի 2016 թվականի **թիվ 51** քաղ. Մոսկվա

Ժամացույցների առանձին տեսակների նկատմամբ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերը սահմանելու մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 42-րդ և 45-րդ հոդվածներին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Սահմանել ժամացույցների առանձին տեսակների նկատմամբ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերը (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 16-ի թիվ 54 որոշման հավելված)՝ համաձայն հավելվածի:

2. Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ծանոթագրությունները (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

խորհրդի 2012 թվականի հուլիսի 16-ի թիվ 54 որոշման հավելված) լրացնել հետևյալ բովանդակությամբ 27Դ — 29Դ ծանոթագրություններով՝

«[27Դ)] Ներմուծման մաքսատուրքի դրույքաչափը մաքսային արժեքի 7%-ի չափով, սակայն ոչ պակաս, քան 1 հատի համար 2 եվրո. կիրառվում է 2016 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2017 թվականի օգոստոսի 31-ը ներառյալ:

[28Դ)] Ներմուծման մաքսատուրքի դրույքաչափը մաքսային արժեքի 7%-ի չափով, սակայն ոչ պակաս, քան 1 հատի համար 1,5 եվրո. կիրառվում է 2016 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2017 թվականի օգոստոսի 31-ը ներառյալ:

[29Դ)] Ներմուծման մաքսատուրքի դրույքաչափը մաքսային արժեքի 7%-ի չափով, սակայն ոչ պակաս, քան 1 հատի համար 4 եվրո. կիրառվում է 2016 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2017 թվականի օգոստոսի 31-ը ներառյալ:»:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի սեպտեմբերի 1-ից:

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի հունիսի 2-ի
թիվ 51 որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքերի

ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Դիրքի անվանումը	Ներմուծման մաքսատուրքի դրույքաչափը (մաքսային արժեքից տոկոսներով՝ կամ եվրոյով, կամ ԱՄՆ դոլարով)
9102 11 000 0	-- միայն մեխանիկական ցուցանշումով	7[27Դ)]
9102 19 000 0	-- այլ	7[28Դ)]
9102 21 000 0	-- ավտոմատ ենթալարվածքով	7[29Դ)]
9102 29 000 0	-- այլ	7[29Դ)]

_____